



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ	6
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	8
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ	8
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	11
ԲԱԺԻՆ 6. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	13
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ	13
ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ	14
ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ	17
ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20
ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՅՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)	22
ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	23
ԲԱԺԻՆ 13. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	23
ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	25

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1" Սույն «Բանկային քարտի ապահովագրության կանոնները» (**այսուհետ՝ Կանոններ**) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2" Բանկային քարտի ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ֆինանսական վնասների ապահովագրություն» դասի մեջ:

1.3" Կանոնները հանդիսանում են Բանկային քարտի ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (**այսուհետ՝ Պայմանագիր**) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4" Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (լրացվել կամ ուժը կորցրած ճանաչվել) միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.5" Կանոնները հրապարակային փաստաթուղթ է և տեղադրված է Ապահովագրողի www.armeniainsurance.am պաշտոնական՝ ինտերնետային կայքում:

1.6" Կանոնների համաձայն **Ապահովագրողը**, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, կնքում է Բանկային քարտերի ապահովագրության **Պայմանագիր**:

1.7" **Ապահովագիր** կարող են հանդիսանալ իրավաբանական անձինք (այդ թվում՝ բանկային քարտեր թողարկող հաճախորդները), անհատ ձեռնարկատերերը կամ գործունակ ֆիզիկական անձինք, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կամ ցանկացած այլ երկրի քաղաքացի, մշտական կամ ժամանակավոր գրանցված/հաշվառված են Հայաստանի Հանրապետության տարածքում և ունեն ապահովագրված բանկային քարտերի օգտագործման հետ կապված գույքային շահեր: Եթե Պայմանագրով որպես Ապահովագիր հանդես է գալիս այլ անձ, ով գործում է ի շահ շահագրգիռ անձանց, ապա այդ դեպքում շահագրգիռ անձինք անվանվում են «Ապահովագրված անձինք» կամ «Շահառուներ»:

1.8" Ապահովագիրը կարող է փոխարինել Պայմանագրում նշված Շահառուին՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին: Ընդ որում, Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա Պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ Ապահովագրողին պահանջ է ներկայացրել Ապահովագրական հատուցում ստանալու համար: Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո Շահառուի մահվան դեպքում Ապահովագրական հատուցումը տրվում է Շահառուի ժառանգներին՝ վերջիններիս կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգությունն ընդունելուց հետո:

1.9" Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել

օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

1.10" Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

1.10.1. *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ,

1.10.2. *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած ֆիզիկական, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,

1.10.3. *Շահառու*՝ Պայմանագրում նշված ֆիզիկական, իրավաբանական անձ, որը համաձայն ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի և Պայմանագրի՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ունի ապահովագրական հատուցում ստանալու իրավունք,

1.10.4. *Ապահովագրական գումար*՝ Պայմանագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ,

1.10.5. *Ապահովագրավճար*՝ Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար,

1.10.6. *Ապահովագրական սակագին*՝ սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

1.10.7. *Չհաղուցվող գումար*՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը,

1.10.8. *Ապահովագրական հաղուցում*՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա և Պայմանագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովադրին (Շահառուին) վճարման ենթակա գումար,

1.10.9. *Բանկ-թողարկող*՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն բանկային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող իրավաբանական անձ,

1.10.10. *Բանկային քարտ կամ Քարտ*՝ Բանկ-թողարկողի կողմից Քարտապանի անունով թողարկված անկանխիկ վճարային Քարտ (դեբետային (հաշվարկային) կամ վարկային), որը թույլ է տալիս Քարտապանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Բանկ-թողարկողի հետ կնքած պայմանագրին համապատասխան՝ իր Հաշվով դեբետային և/կամ վարկային գործառնություններ և վճարումներ կատարել, կամ մնացորդի կամ կրեդիտային սահմանաչափի սահմաններում կանխիկ դրամական միջոցներ ստանալ, կամ կատարել մուտքագրում Քարտապանի հաշվին,

1.10.11. *Հաշիվ*՝ Քարտապանի անունով և Պայմանագրի համաձայն բացված բանկային հաշիվ, որն օգտագործվում է Բանկային քարտով կամ դրա վավերապայմանների օգտագործմամբ կատարված գործառնությունների ձևակերպման և փոխհաշվարկների իրականացման համար,

1.10.12. *Ապահովագրված Քարտ*՝ Ապահովագրված անձի գործող Քարտը, որը նշված է Պայմանագրում և ապահովագրված է Կանոնների 4.1 կետում նշված մեկ կամ մի քանի ապահովագրական ռիսկերով,

1.10.13. *Դեբետային Քարտ*՝ քարտ, որը նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների հաշվին,

1.10.14. Վարկային (կրեդիտային) քարտ՝ քարտ, որը նախատեսված է քարտապանի կողմից գործառնություններ իրականացնելու համար՝ թողարկողի կողմից քարտապանին տրամադրված վարկային պայմանագրի պայմանների համաձայն վարկային միջոցների հաշվին,

1.10.15. Քարտապան՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը թողարկողի հետ կնքել է վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր,

1.10.16. Գործարք՝ Քարտի օգտագործմամբ Հաշվի հետ կապված գործառնություն,

1.10.17. Հավատարմագրում՝ Բանկ-թողարկողի կողմից տրամադրված թույլտվություն՝ Քարտի օգտագործմամբ գործառնություններ կատարելու համար,

1.10.18. Բանկումար՝ էլեկտրոնային ծրագրային-տեխնիկական համալիր, որը նախատեսված է կանխիկ դրամական միջոցների տրամադրման կամ ընդունման, բանկային քարտերի օգտագործմամբ իրականացվող գործառնություններով փաստաթղթերի կազմման, Հաշվի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, անկանխիկ վճարումների իրականացման և այլ նպատակների համար,

1.10.19. Էլեկտրոնային տերմինալի անդորրագիր, բանկումարի անդորրագիր՝ փաստաթղթեր, որոնք Քարտապանը ստանում է ի հաստատում Գործարքի կատարման,

1.10.20. Կեղծ բանկային քարտ՝ առանց Բանկ-թողարկողի գիտության Երրորդ անձի կողմից պատրաստված ցանկացած սարք, որի մեջ պարունակվում է տեղեկատվություն Հաշվի վերաբերյալ և որը հնարավորություն է տալիս գործառնություններ իրականացնել Քարտապանի Հաշվի հետ, կամ թեև թողարկված է Բանկ-թողարկողի կողմից, սակայն փոփոխության է ենթարկվել ցանկացած ձևով՝ առանց Բանկ-թողարկողի իմացության,

1.10.21. Քարտի տեղեկատվության բացահայտում՝ իրավիճակ, երբ Բանկային քարտի տվյալները (Ինտերնետ բանկի ծածկագիր և ծածկանուն, PIN կոդ, մեկանգամյա ծածկանուն, Քարտապանի անձնագրային տվյալները կամ անձը հավաստող փաստաթղթի տվյալները և գաղտնի բառը) հայտնի են դարձել այլ անձի, որի հետևանքով դրա հետագա օգտագործումն անվտանգ չէ և կարող է բերել Հաշվից դրամական միջոցների չարտոնված ելքագրմանը,

1.10.22. Ինտերնետ-բանկ՝ հավատարմագրված բանկային համակարգ, որն ապահովում է Ապահովագրված անձի՝ ինտերնետային ցանցի միջոցով հեռահար բանկային սպասարկումը,

1.10.23. Օվերդրաֆտ՝ Բանկ-թողարկողի կողմից կրեդիտի տեսքով սպառողական նպատակով բանկային, ավանդային կամ այլ հաշվի վրա տրամադրված գումար կամ այդպիսի գումարի տրամադրման խոստում, այդ թվում՝ վճարային քարտերով,

1.10.24. Ապահովագրական դեպոզիտ (չնվազող մնացորդ)՝ Հաշվի այն գումարը, որը չի կարող օգտագործվել Քարտապանի կողմից և ծառայում է Բանկ-թողարկողի վնասները ծածկելու համար՝ վարկի կամ Օվերդրաֆտի գումարը չվերադարձնելու դեպքում,

1.10.25. Վճարման էլեկտրոնային միջոց՝ միջոց և (կամ) եղանակ, որը թույլ է տալիս դրամական միջոցների փոխանցման օպերատորի հաճախորդին, անկանխիկ հաշվարկների կիրառվող ձևերի շրջանակներում, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների, տեղեկատվության էլեկտրոնային կրիչների, այդ թվում՝ վճարային քարտերի և այլ տեխնիկական սարքերի օգտագործմամբ, կազմել, հաստատել և փոխանցել կարգադրություններ՝ դրամական միջոցների փոխանցումն իրականացնելու համար,

1.10.26. Ստոպ-ցանկ՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վարվող ցուցակ, որտեղ Քարտապանի կամ Բանկ-թողարկողի ցանկությամբ տեղադրվում են հափշտակված վճարային քարտերի համարները՝ դրանց միջոցով գործարքների իրականացումը կանխելու նպատակով,

1.10.27. *Ֆինանսական փաստաթղթեր*՝ Ապահովադրի կամ Քարտապանի անձնական փաստաթղթերը, որոնք առնչվում են Ապահովադրին կամ Քարտապանին պատկանող դրամական միջոցների տնօրինմանը և չեն հանդիսանում արժեթղթեր և/կամ արտարժույթային արժեքներ,

1.10.28. *Երրորդ անձինք*՝ եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով՝ ցանկացած անձ, բացառությամբ Ապահովագրված Քարտով Քարտապանի, Ապահովագրված Քարտով Քարտապան հանդիսացող Ապահովադրի աշխատակիցների, Բանկ-թողարկողի, Բանկ-թողարկողի աշխատակիցների, այն բանկային քարտերը սպասարկող պրոցեսինգային կենտրոնների, որոնց Քարտապանը Ապահովադրին է կամ Ապահովագրված անձինք, այն կազմակերպությունների, որոնք վճարման համար ընդունում են Քարտեր, որոնց Քարտապանը Ապահովադրին է կամ Ապահովագրված անձինք,

1.10.29. *ԱԳՄ*՝ ավտոմատ գանձման մեքենա կամ ցանկացած այլ ավտոմատ մեքենա, որի միջոցով իրականացվում են ֆինանսական գործառնություններ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության,

1.10.30. *Ապահովադրի կամ Բանկ-թողարկողի աշխատակիցներ*՝ ֆիզիկական անձինք, որոնք կատարում են որոշակի աշխատանք՝ Ապահովադրի կամ Բանկ-թողարկողի հետ կնքած աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա: Այս հասկացությունը կիրառվում է բացառապես Ապահովադիր-իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ,

1.10.31. *Պայմանագիր բանկային քարտերի սպասարկման վերաբերյալ*՝ պայմանագիր Ապահովադրի կամ Քարտապանի և Բանկ-թողարկողի միջև, որով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանվում են կողմերի հարաբերությունները,

1.10.32. *Ընդամենը անդամներ*՝ Քարտապանի գրանցված ամուսինը/կինը կամ Քարտապանի հետ նույն բնակարանում ապրող կամ համատեղ տնտեսություն վարող անձինք, այդ թվում՝ ծնողները, տատը, պապը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած որդին/դուստրը և նրա ամուսինը/կինը, 18 տարին լրացած եղբայրը/քույրը, վերջինիս ամուսինը/կինը և նրանց՝ 18 տարին լրացած երեխաները, վերջիններիս ամուսինը/կինը և նրանց՝ 18 տարին լրացած երեխաները, ամուսնու/կնոջ ծնողները և 18 տարին լրացած երեխաները:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ

2.1. Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին վճարել Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում ապահովագրական հատուցում:

2.2. Պայմանագրով Բանկային քարտը կարող է ապահովագրվել հոգուտ այն անձի (ապահովադրի կամ շահառուի), որը օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ Քարտի պահպանման շահ ունի: Ապահովադրի կամ շահառուի մոտ ապահովագրված Քարտի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված Քարտի ապահովագրության պայմանագիրն անվավեր է:

2.3. Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի բանավոր հայտարարությունը կամ Ապահովագրողի պահանջով գրավոր դիմումը, եթե անհրաժեշտ է որպեսզի Ապահովադրի կողմից ներկայացվող դիմումի մեջ ներառվեն լրացուցիչ

տեղեկություններ, որոնք չեն ներառվելու Պայմանագրում և (կամ) այդ տեղեկություններն անհրաժեշտ են Ապահովագրողին ապահովագրության ընդունվող ռիսկի գնահատման նպատակով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու համար:

2.4. Պայմանագրի կնքման համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել՝

2.4.1. Իրավաբանական անձ Ապահովադիրները ներկայացնում են փաստաթղթեր, որոնք Ապահովագրողին թույլ են տալիս պարզել հետևյալ տեղեկությունները.

- Անվանումը,
- Հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>),
- Պետական գրանցման համարը, պետական գրանցման ամսաթիվը և վայրը,
- Գրանցող մարմնի անվանումը,
- Գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական հասցեն),
- Փաստացի հասցեն,
- Կոնտակտային անձի ազգանուն, անուն հայրանուն, հեռախոսը, էլեկտրոնային փոստի հասցեն:

2.4.2. Անհատ ձեռնարկատեր Ապահովադիրները ներկայացնում են փաստաթղթեր, որոնք Ապահովագրողին թույլ են տալիս պարզել հետևյալ տեղեկությունները.

- Ազգանուն, անուն, հայրանուն,
- Քաղաքացիությունը,
- Ծննդյան ամսաթիվը և վայրը,
- Անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները,
- Միգրացիոն քարտի կամ ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի գտնվելու (բնակվելու) իրավունքը հաստատող փաստաթղթի տվյալները,
- Բնակության (գրանցման) և գտնվելու վայրի հասցեն,
- Հարկ վճարողի հաշվառման համարը (<ՎՀՀ>),
- ԱԶ-ի պետական գրանցման համարը, ԱԶ-ի պետական գրանցման ամսաթիվը,
- Գտնվելու վայրի հասցեն, գրանցման վայրի հասցեն,
- Փոստային հասցեն,
- Կոնտակտային անձի Ա.Ա.Հ., հեռախոսը, էլեկտրոնային փոստի հասցեն:

2.4.3. Ֆիզիկական անձ Ապահովադիրները ներկայացնում են փաստաթղթեր, որոնք Ապահովագրողին թույլ են տալիս պարզել հետևյալ տեղեկությունները.

- Անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները,
- Միգրացիոն քարտի կամ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի գտնվելու (բնակվելու) իրավունքը հաստատող փաստաթղթի տվյալները,
- Բնակության (գրանցման/հաշվառման) և գտնվելու վայրի հասցեն,
- Կոնտակտային հեռախոսը,
- Էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

2.4.4. Եթե որպես Ապահովադիր հանդես է գալիս Բանկ-թողարկողը, ապա Ապահովագրողին է ներկայացնում նաև հետևյալ փաստաթղթերը.

- Բանկային քարտերի օգտագործման կանոնակարգը/կանոնները,

- Քարտապանի հետ պայմանագրի տիպային ձևը:

2.4.5. այլ փաստաթղթեր կամ դրանց պատճենները կամ տվյալներ, եթե այդպիսիք կապահանջի Ապահովագրողը:

2.5. Ապահովագրողն իրավունք ունի կրճատել Կանոնների 2.4. կետում նշված փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:

2.6. Ապահովադրի մահվան դեպքում նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են երրորդ անձին (Շահառուին), եթե վերջինիս օգտին է կնքվել Պայմանագիրը, իսկ եթե Պայմանագրում Շահառու նախատեսված չէ, ապա Ապահովադրի իրավունքներն ու պարտականությունները անցնում են վերջինիս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգություն ընդունած ժառանգներին:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված այնպիսի չնախատեսված ծախսերի (վնասների) առաջացման հետ, որոնք Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կարող է կրել որպես Քարտապան կամ Հաշվի սեփականատեր, այնպիսի իրադարձությունների արդյունքում, որոնք Կանոններում սահմանված են որպես Ապահովագրական պատահարներ և նշված են Պայմանագրում (Վկայագրում):

3.2. Պայմանագրում պետք է նշվեն այն Քարտերը (անհրաժեշտության դեպքում՝ մանրամասնելով և նշելով Քարտերի վավերապայմանները), որոնց օգտագործման հետ կապված ապահովագրված են Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը:

3.3. Պայմանագրով նախատեսված դեպքերում Կանոնների գործողությունը կարող է տարածվել վճարման այլ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ կատարվող գործառնությունների վրա, որոնց միջոցով կազմակերպվում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) Հաշվի հասանելիությունը:

3.4. Կանոնների համաձայն կնքվող Պայմանագրով կարող է նախատեսվել ինչպես Կանոնների 4.1. կետով նախատեսված բոլոր Ապահովագրական ռիսկերից ապահովագրություն, այնպես էլ մեկ կամ մի քանի Ապահովագրական ռիսկերից ապահովագրություն:

3.5. Ապահովագրության տարածքն այն տարածքն է, որի սահմանների ներսում տեղի ունեցած ապահովագրական պատահարների համար Ապահովագրողը կրում է Կանոններով նախատեսված պատասխանատվություն: Ապահովագրության տարածք է համարվում ապահովագրության Պայմանագրում նշված ցանկացած երկիր բացառությամբ Բանկ-թողարկողի կողմից կիրառվող սահմանափակումների:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ

4.1. Կանոններով ապահովագրական պատահարներ են համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) մոտ Պայմանագրի գործողության ժամկետում Պայմանագրում նշված Ապահովագրված Քարտերի (որոնց Քարտապանը հանդիսանում է Ապահովադիրը (Ապահովագրված անձը)) օգտագործման հետ կապված այնպիսի չնախատեսված ծախսերի (վնասների) առաջացումը, որոնք ի հայտ են եկել հետևյալ հանգամանքների հետևանքով.

4.1.1. Ապահովագրված Քարտի Հաշվից դրամական միջոցների ելքագրումը՝ Քարտապանի կողմից կորցված կամ գողացված Ապահովագրված քարտի օգտագործմամբ Երրորդ անձանց կողմից չարտոնված Գործարքներ իրականացնելու հետևանքով: Այդպիսին կարող են համարվել բացառապես այն չարտոնված Գործարքները, որոնք իրականացվել են Բանկ-թողարկողին պատահարի մասին սահմանված կարգով և եղանակներում հայտնելու պահին նախորդող 48 (քառասունութ) ժամ տևողությամբ ժամանակահատվածի համար,

4.1.2. Ապահովագրված Քարտի Հաշվից դրամական միջոցների ելքագրումը՝ Քարտապանի կողմից համացանցում Ապահովագրված Քարտի օգտագործմամբ չարտոնված Գործարքներ իրականացնելու պատճառով,

4.1.3. Ապահովագրված Քարտի Հաշվից դրամական միջոցների ելքագրումը՝ Երրորդ անձանց կողմից հեռախոսի միջոցով Ապահովագրված Քարտի օգտագործմամբ չարտոնված Գործարքներ իրականացնելու պատճառով, բացառությամբ այն ելքագրումների, որոնք առաջացել են հեռախոսի անվտանգության համակարգերը միացված չլինելու պատճառով,

4.1.4. Ապահովագրված Քարտի Հաշվից դրամական միջոցների ելքագրումը՝ ԱԳՄ-ներից կանխիկացում կատարելու միջոցով,

4.1.5. Ապահովագրված Քարտի Հաշվից Բանկ-թողարկողի կողմից դրամական միջոցների ելքագրումը՝ կեղծված սլիպերի, էլեկտրոնային տերմինալի անդորրագրերի (ստացականների), կեղծ բանկային քարտի կամ վճարման այլ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, որոնք ցույց են տալիս Քարտապանի կողմից Գործարքների իրականացումը,

4.1.6. Երրորդ անձանց կողմից Բանկումատից դրամական միջոցների հափշտակությունը՝ Քարտապանի կողմից Ապահովագրված քարտը օգտագործելու միջոցով: Նշված դրամական միջոցների հափշտակությունը կարող է ուղեկցվել ինչպես Ապահովագրված Քարտի հափշտակությամբ, այնպես էլ կարող է կատարվել առանց դրա: Հափշտակությունը որպես անօրինական գործողություն, պետք է որակվի որպես գողություն, կողոպուտ, կամ ավազակություն,

4.1.7. Ապահովադրի (Ապահովագրված անձի) Հաշվին տրամադրված Օվերդրաֆտի գծով մասնակի կամ ամբողջական պարտքի առաջացումը՝ Կեղծ վճարային բանկային քարտի, Քարտապանի կողմից կորցված կամ Քարտապանից գողացված Ապահովագրված վճարային Քարտի օգտագործմամբ Երրորդ անձանց կողմից չարտոնված Գործարքներ կատարելու հետևանքով: Ընդ որում, սույն ենթակետում նշված դեպքում հատուցման ենթակա է միայն մայր գումարի գծով պարտավորությունը,

4.1.8. Ապահովադրի (Ապահովագրված անձի) Հաշվին վարկային գումարի գծով մասնակի կամ ամբողջական պարտքի առաջացումը՝ Կեղծ վարկային բանկային քարտի, Քարտապանի կողմից կորցված կամ Քարտապանից գողացված Ապահովագրված վարկային Քարտի օգտագործմամբ Երրորդ անձանց կողմից չարտոնված Գործարքներ կատարելու հետևանքով: Ընդ որում, սույն ենթակետում նշված դեպքում հատուցման ենթակա է միայն մայր գումարի գծով պարտավորությունը,

4.1.9. Ապահովագրված Քարտը Բանկ-թողարկողի կողմից ստույգ ցանկում չներառելու պատճառով Ապահովագրված Քարտով (Հաշվով) կատարված բոլոր այն չարտոնված Գործարքները, որոնք կատարվել են Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Բանկ-թողարկողին Ապահովագրված Քարտի կորստի (կորուստ, գողություն, ավազակություն կամ կողոպուտ) փաստի վերաբերյալ տեղեկացնելուց հետո առավելագույնը 72 ժամվա ընթացքում:

4.1.10. Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված Քարտի վերականգնումը:

4.2. Ապահովագրական պատահար չեն ճանաչվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն հետևյալ վնասները,

4.2.1. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրել է այն Քարտերի օգտագործման հետ կապված, որոնք նշված չեն Պայմանագրում,

4.2.2. Բանկ-թողարկողը Պայմանագրով հանդես չի գալիս որպես Ապահովադիր, Շահառու կամ Ապահովագրված անձ, ապա Ապահովագրված Քարտի/Հաշվի տվյալների գաղտնագործման, Ապահովագրված Քարտի կորցնելու, հափշտակության, Հաշվի մուտքի իրավասությունը բացահայտվելու, Հաշվից դրամական միջոցների անօրինական (կասկածելի) ելքագրման և այլնի վերաբերյալ ծանուցում ստանալու դեպքում՝ Բանկ-թողարկողի կողմից Ապահովագրված Քարտի արգելափակման/Հաշվի գործարքների կասեցման պարտականությունը ժամանակին չի կատարվել,

4.2.3. Հարկադիր կատարման ծառայության կամ այլ պետական մարմինների կողմից ընդունված հրամանի և/կամ որոշման հետևանքով առաջացած վնասները,

4.2.4. Ընտանիքի անդամի կողմից կատարված չարտոնված Գործարքները, միտումնավոր գործողություններից կամ այնպիսի գործողություններից ծախսերը, որոնք հայտնի էին Ընտանիքի անդամին կամ ծրագրվել են նրա կողմից,

4.2.5. Ստոպ-ցանկ զգելու անհրաժեշտության վերաբերյալ Ապահովադիրի կողմից Բանկ-թողարկողին տեղեկացնելու պարտականությունը չկատարելու կամ սահմանված ժամկետում չկատարելու հետ կապված վնասները,

4.2.6. Ապահովագրված Քարտը ստոպ ցանկում չներառելու պատճառով Ապահովագրված Քարտով (Հաշվով) կատարված բոլոր այն չարտոնված Գործարքներ, որոնք կատարվել են Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից Բանկ-թողարկողին Ապահովագրված Քարտի կորստի (կորուստ, գողություն, ավազակություն կամ կողոպուտ) փաստի վերաբերյալ տեղեկացնելուց առավելագույնը 72 ժամ հետո:

4.2.7. Որոնք առաջացել են Ապահովագրված Քարտին կցված Հաշվից դրամական միջոցների չարտոնված այնպիսի ելքագրման հետևանքով, որը հնարավոր է դարձել Քարտապանի (Քարտի սեփականատիրոջ) կողմից Ապահովագրված Քարտի (Հաշվի) գաղտնի տեղեկատվության (գաղտնաբառերի, ծածկանունների, PIN կոդերի և այլն) բացահայտման պատճառով, ինչպես նաև Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրել է Քարտապանի կամ Հաշվի սեփականատիրոջ կողմից Ապահովագրված Քարտի PIN-ծածկագրի բացահայտման կամ իրավապահ մարմինների մոտ PIN-ծածկագրի բացահայտման հիմնավորված կասկածի դեպքում,

4.2.8. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրել է իր կամ Քարտապանի կողմից Ապահովագրված Քարտը տրամադրող Բանկ-թողարկողի կողմից նախատեսված Քարտերի օգտագործման կանոնները, Ինտերնետ- բանկի անձնական կաբինետի և/կամ Ապահովագրված Քարտի սպասարկման կարգի մասին պայմանագրի դրույթները խախտելու հետևանքով, այդ թվում՝ Ապահովագրված Քարտի PIN կոդի համարը կողմնակի անձանց հասանելի վայրերում և/կամ Ապահովագրված Քարտը PIN կոդի հետ միասին պահպանելու հետևանքով,

4.2.9. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրել է Ապահովադիր և/կամ Քարտապանի միտումնավոր և/կամ հակաօրինական գործողությունների (անգործության) արդյունքում: Սույն կետի շրջանակներում Ապահովադիր (Ապահովագրված անձի) գործողությունները որպես այդպիսին դասակարգելու պարտավորությունը կրում է Ապահովագրողը,

4.2.10. Որոնցով Ապահովադիրին (Շահառուին) օրենքով կամ պայմանագրով իրավունք է վերապահված հատուցում ստանալ Բանկ-թողարկողից, բացառությամբ այն դեպքերի, երբ Քարտապանը վնասը կրել է իր մեղքից անկախ զեղծարարություն/խարդախություն տեղի ունենալու հետևանքով,

4.2.11. Որոնք ի հայտ են եկել ռազմական գործողությունների, ահաբեկչության կամ դրա կիրառման սպառնալիքի, հակաահաբեկչական գործողությունների, քաղաքացիական հուզումների և գործադուլների արդյունքում, առաջ են եկել ատոմային էներգիայի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով, ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են էպիլեպսիայի, հոգեկան հիվանդությունների, թմրամոլության, թունամոլության, քրոնիկ ալկոհոլիզմի, ինչպես նաև կապված են Ապահովագրի (քարտապանի) կողմից դիտավորյալ ինքն իրեն մարմնական վնասվածքներ պատճառելու հետ,

4.2.12. Բանկում Քարտապանի վարկերի, պարտավորությունների և այլնի գծով տոկոսները, տույժերն ու տուգանքները, որոնք առաջացել են Հաշվի տիրոջ կողմից Բանկ-թողարկողի հանդեպ ունեցած պարտավորությունները չկատարելու արդյունքում, այդ թվում (եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Պայմանագրով), եթե այդ տոկոսները հաշվարկվել են Երրորդ անձանց կողմից իրականացված չարտոնված Գործարքների արդյունքում,

4.2.13. Ինչպես Ապահովագրի կամ Բանկ-թողարկողի, այնպես էլ Ապահովագրի, Բանկ-թողարկողի կամ Ապահովագրված անձի անունից կամ հանձնարարությամբ գործող կազմակերպությունների Աշխատակիցների կամ նրանց տնօրենների (ղեկավարների) կողմից խարդախության կամ անօրինական գործողությունների հետևանքով (անկախ նրանից, թե տվյալ անձը գործել է միայնակ կամ այլ անձանց հետ համաձայնության գալով) Ապահովագրի (Ապահովագրված անձի) կրած ամբողջական, մասնակի, ուղղակի կամ անուղղակի վնասները,

4.2.14. Ապահովագրված Քարտով (Հաշվով) կատարված բոլոր այն գործարքները, որոնք կատարվել են Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից Բանկ-թողարկողին Ապահովագրված Քարտի կորստի (կորուստ, գողություն, ավազակություն կամ կողոպուտ) փաստի վերաբերյալ տեղեկացնելուց հետո, բացառությամբ՝ Ստոպ ցանկի:

4.2.15. որոնք առաջացել են մինչև Պայմանագրի գործողության սկիզբը՝ նախքան Ապահովագրողի՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունների ուժի մեջ մտնելը, կամ դրա ավարտից հետո,

4.2.16. որոնք առաջացել են մինչև Բանկ-թողարկողի կողմից Ապահովագրված Քարտը օգտագործման համար Ապահովագրին (Ապահովագրված անձին) փոխանցման պահը կամ մինչև Ապահովագրի (Ապահովագրված անձի) էլեկտրոնային կոդը ստանալը (PIN և այլն):

4.3. Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրում՝ որպես Ապահովագրական պատահար չճանաչվող և Ապահովագրական հատուցման ոչ ենթակա հանգամանքների վերոնշյալ ցանկում կատարել լրացումներ:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

5.1. Ապահովագրական գումարը սահմանվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

5.2. Պայմանագրում նշված Ապահովագրական գումարը Ապահովագրական հատուցման վճարման սահմանաչափն է՝ Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում տեղի ունեցած բոլոր Ապահովագրական պատահարների հանրագումարի համար:

5.3. Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ

արտարժույթով՝ Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով:

5.4. Ընդհանուր Ապահովագրական գումարի սահմաններում կարող են սահմանվել հատուցման սահմանաչափեր՝

5.4.1. Քարտի որոշակի տեսակի համար,

5.4.2. Մեկ Քարտի համար,

5.4.3. Որոշակի Ապահովագրական պատահարի համար,

5.4.4. Որոշակի իրադարձության կամ հանգամանքի համար, որի արդյունքում կարող է տեղի ունենալ Ապահովագրական պատահար,

5.4.5. Դատարանում գործեր վարելու հետ կապված ծախսերի մասով,

5.5. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը կազմելու ամսաթվից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

5.6. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

5.7. Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Ընկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

5.8. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

5.9. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել անկանխիկ կերպով Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

5.10. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

5.11. Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկը կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

5.12. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով՝

Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

5.13. Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

5.14. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

5.15. Եթե Ապահովադիրն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադիրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 6. ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար :

6.2. Հատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

6.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

6.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ

7.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

7.2. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում: Պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

7.3. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

7.3.1. Պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

7.3.2. Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

7.3.3. կողմերի համաձայնությամբ.

7.3.4. օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.4. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:

7.5. Ապահովադիր պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրն է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադիրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադիր պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադիրն է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

7.6. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադիր կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադիրն է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադիրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

7.7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայցը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել կամ ստացել է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում:

7.8. Ապահովադիր և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

8.1. Այն պահից, երբ Ապահովադիրն (Ապահովագրված անձին) հայտնի է դարձել այնպիսի վնասի կամ դրա առաջ գալու հնարավորության մասին, որը կարող է դասակարգվել որպես Ապահովագրական պատահար, նա պարտավոր է՝

8.1.1. Կանոններով նախատեսված Ապահովագրական պատահարները ի հայտ գալու դեպքում անմիջապես դիմել Բանկ-թողարկողին և արգելափակել Ապահովագրված Քարտը, ինչպես նաև (եթե դա պահանջվում է Քարտերի սպասարկման պայմանագրով) Բանկ-թողարկողին 48 ժամվա ընթացքում դիմում ներկայացնել Գործարքի բողոքարկման վերաբերյալ՝ Բանկ-թողարկողի կողմից սահմանված ժամկետում:

8.1.2. Ապահովագրված Քարտի հափշտակության կամ գողության հայտնաբերման դեպքում, Ապահովագրական պատահարների ի հայտ գալու դեպքում, անհապաղ, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, տեղեկացնել ՀՀ Ոստիկանություն կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններին՝ տվյալ փաստերի, և Քարտապանի նկատմամբ այլ հակաօրինական գործողությունների մասին, և պարբերաբար տեղեկացնել Ապահովագրողին իրադարձության քննության ընթացքի, դրա պատճառների և հետևանքների մասին, ինչպես նաև մասնակցություն ունենալ այդ քննությանը:

Վերը նշված հակաօրինական գործողությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ոստիկանություն կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններ տեղեկացնել չի պահանջվում, եթե դրանց արդյունքում պատճառված վնասը զգալի չէ, այսինքն, 20 000 (քսան հազար) դրամից պակաս է: Տվյալ դրույթը չի տարածվում Բանկոմատից դրամական միջոցների հափշտակության դեպքերի վրա: Կանոններով նախատեսված մնացած Ապահովագրական պատահարների դեպքում ՀՀ Ոստիկանություն կամ օտարերկրյա պետության համապատասխան պատկան (իրավասու) մարմիններին անհապաղ տեղեկացնելը անհրաժեշտ է միայն, եթե Բանկ-թողարկողի կողմից տրվել է պաշտոնական պատասխան, այն մասին, որ չարտոնված ելքագրված գումարը ենթակա չէ վերադարձման Բանկ-թողարկողի կողմից՝ Բանկային Քարտի օգտագործման կանոնների և պայմանների համաձայն:

8.1.3. Անհապաղ, բայց ոչ ուշ, քան Ապահովագրական պատահարը ի հայտ գալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողի ներկայացուցիչներին Պայմանագրում նշված հեռախոսահամարներով, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին: Քարտապանի Ապահովագրված քարտի կորստի կամ հափշտակության դեպքում՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 48 (քառասունութ) ժամվա ընթացքում տեղեկացնել նաև Բանկ-թողարկողին՝ ներկայացնելով քարտային գործարքի բողոքարկման դիմում, Իսկ Բանկ-թողարկողին տեղեկացնելուց հետո, եթե վերջինս հանդիսանում է Ապահովադիր, Բանկ-թողարկողը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին:

8.1.4. Ձեռնարկել տվյալ հանգամանքներում խելամիտ և հասանելի միջոցներ՝ վնասները կանխելու և/կամ դրանց չափը նվազեցնելու ուղղությամբ: Նման միջոցներ ձեռնարկելիս Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պետք է հետևի Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսիք իրեն տրվել են: Նման միջոցներին, մասնավորապես, դասվում են Ապահովադիր (Ապահովագրված անձի) դիմումի հիման վրա Ապահովագրված Քարտի վերաթողարկումը և դրա արգելափակումը՝ Ստոպ- ցանկ գցելով (երկու օրացուցային շաբաթից ոչ ավել և երկու գոտիներով, որոնք որոշվում են համապատասխան վճարային համակարգի կանոններին համապատասխան, եթե այլ կարգ ուղղակիորեն չի նախատեսված Բանկ-թողարկողի արգելափակման և Քարտերը ստոպ-ցանկի հաստատման Բանկի կանոններով):

8.1.5. Ապահովագրողին տեղեկացնել Բանկ-թողարկողի կողմից Քարտապանի նախադատական կարգով ներկայացված Գործարքների վճարման հետ կապված պահանջի բավարարումը մերժելու մասին:

8.1.6. Ապահովագրողի ցուցումով դատարան հայցադիմում ներկայացնել Բանկ-թողարկողի նկատմամբ՝ Գործարքների վճարման հետ կապված Քարտապանի նախադատական կարգով ներկայացված պահանջի բավարարումը Բանկ- թողարկողի կողմից մերժելու կապակցությամբ: Այս դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը)

պարտավոր է Ապահովագրողի համար ապահովել դատական գործընթացում մասնակցելու հնարավորություն, իսկ եթե Ապահովագրողը որոշի ներկայացնել Ապահովադրին (հայցվորին) դատական գործընթացում, ապա Ապահովագրողի նշած անձին տալ լիազորագիր բոլոր անհրաժեշտ դատավարական իրավասություններով, այդ թվում՝ հաշտության համաձայնագիր կնքելու, հայցից հրաժարվելու կամ հայցը ճանաչելու իրավունքով (հակընդդեմ հայցով):

8.2. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով դիմելու կարգը սահմանվում է Պայմանագրում:

8.3. Ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ գրավոր դիմումի հետ միասին Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել Ապահովագրական պատահարի(ների) վրա հասնելու փաստը, դրանց պատճառը և վնասի չափը հաստատող փաստաթղթեր: Ապահովագրական պատահարի բնույթից կախված նման փաստաթղթեր կարող են լինել՝

8.3.1. Գրավոր դիմում,

8.3.2. Պայմանագրի բնօրինակը կամ կրկնօրինակը (Ապահովադրի մոտ առկա տարբերակը),

8.3.3. Ապահովադրի/Քարտապանի (Հաշվի սեփականատիրոջ) անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ նոտարական վավերացմամբ պատճենը,

8.3.4. Փաստաթղթերը, որոնք հավաստում են Քարտապանի(Հաշվի սեփականատիրոջ) Ապահովադրի կողմից պահանջ ներկայացնելը Բանկ- թողարկողին՝ Գործարքի վճարումից հրաժարվելու վերաբերյալ (վիճելի գործարքի հայտարարություն),

8.3.5. Ապահովագրված քարտը արգելափակելու նպատակով՝ Բանկ-թողարկողին չարտոնված Գործարքների մասին ժամանակին հայտնելը հաստատող փաստաթղթեր (Բանկ-թողարկողի ներքին փաստաթղթեր, Ապահովագրված Քարտի արգելափակում և Ստոպ-ցանկի գցում),

8.3.6. Երրորդ անձանց կողմից իրականացված չարտոնված Գործարքների առկայությունը հաստատող փաստաթղթեր (վավերականության հաշվետվություն, կտրոններ, բանկոմատների ժապավեններ, աշխատանքային վայրից տեղեկանքներ և այլն),

8.3.7. Քարտապանի (Ապահովագրված անձի) Հաշվից քաղվածքների պատճենները՝ նշելով դրամական գումարները, որոնք Երրորդ անձանց կողմից չարտոնված Գործարքների իրականացման հետևանքով հաշվանցվել են Բանկ-թողարկողի եզրակացությունը, որը կազմվել է այն փաստի առնչությամբ, որ Երրորդ անձինք կատարել են չարտոնված Գործարքներ,

8.3.8. Օվերդրաֆտի կամ վարկային պարտավորության առաջացումը հաստատող փաստաթղթեր,

8.3.9. Դատական մարմինների՝ օրինական ուժի մեջ մտած ակտերը (եթե Բանկ-թողարկողը հրաժարվել է բավարարել Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջները՝ վիճելի Գործարքների մասով նախադատական կարգով գումարները վերադարձնելու համար),

8.3.10. Տեղեկանքներ, արձանագրություններ, որոշումներ և ՀՀ ոստիկանության կամ օտարերկրյա պետությունների համապատասխան իրավասու մարմինների այլ փաստաթղթերը (Կանոնների 8.1.2. կետ), որոնք տրվել են Ապահովադրի (Ապահովագրված անձի) դիմումի հիման վրա, ներառյալ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը կամ քրեական գործ հարուցելուց հրաժարվելու մասին որոշման պատճենը,

8.3.11. Վնասների չափը հաստատող փաստաթղթեր (Քարտապանների Հաշիվներից չարտոնված դուրս գրված գումարները հաստատող փաստաթղթեր, Օվերդրաֆտի գումարը, վարկային պարտքի գումարը և նմանատիպ այլ փաստաթղթեր),

8.3.12. Փաստաթղթերը, որոնք պարունակում են ավազակային հարձակման հետևանքով Ապահովադրին (Քարտապանին) հարվածներ կամ մարմնական վնասվածքներ հասցնելու բժշկական եզրակացության արդյունքները,

8.3.13. Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Կանոններով նախատեսված հիմքերով կրած վնասները (ծախսերը) հաստատող փաստաթղթեր:

Բոլոր փաստաթղթերը Ապահովագրողին տրամադրվում են բնօրինակով կամ նոտարական վավերացմամբ պատճենով, կամ տվյալ մարմնի կողմից տրված փաստաթղթով: Ապահովագրողին տրամադրվող Ապահովագրական հատուցումների հետ կապված բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հայոց լեզվով: Եթե Ապահովագրողին տրամադրվող փաստաթղթերը տրվել են օտարերկրյա պետության տարածքում, ապա դրանք պետք է ունենան նոտարական վավերացմամբ հայերեն թարգմանություն:

8.4. Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմումը ստանալու փաստը պետք է հաստատվի Ապահովագրողի իրավասու ներկայացուցչի ստացականով, կամ Ապահովագրողի հասցեով, ներառված փաստաթղթերի ցանկը պարունակող գնահատված նամակի ուղարկման վերաբերյալ փոստային ծառայության կողմից տրված անդորրագրով:

8.5. Ապահովագրական պատահարի վրա հասնելու փաստը, դրա պատճառը և վնասի չափը հաստատող՝ Կանոններով նախատեսված փաստաթղթերի կոնկրետ ցանկը յուրաքանչյուր կոնկրետ ապահովագրական պատահարի դեպքում կարող է նշված լինել ապահովագրության Պայմանագրի տեքստում կամ դրան կից առանձին հավելվածում:

8.6. Վերոնշյալ փաստաթղթերի ներկայացման պարտադիր բնույթը և դրանց ներկայացման հատուկ կարգը կարող են վերապահվել Ապահովագրողի կողմից Պայմանագրում, դրան կից առանձին հավելվածում կամ Վկայագրում:

8.7. Գործի հանգամանքների հետ կապված Ապահովագրողն իրավունք ունի կրճատել կամ ընդլայնել Կանոնների 8.3. կետում նշված փաստաթղթերի ցանկը:

ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

9.1. Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է, որը վճարվում է ՀՀ դրամով:

9.2. Ապահովադրի (Քարտապանի) կողմից ներկայացված դեպքը որպես Ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում, Ապահովագրողը Ապահովադրին (Քարտապանին) վճարում է Ապահովագրական հատուցում՝ Պայմանագրով նախատեսված Ապահովագրական գումարի սահմաններում:

9.3. Եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Կանոնների 4.1.1.-4.1.3. կետերում նշված իրադարձությունների արդյունքում, ապա Ապահովագրական հատուցումը վճարվում է Քարտապանի Հաշիվներից անհիմն դուրս գրված գումարի չափով (մասհանած Պայմանագրով նախատեսված ֆրանշիզաները), բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված համապատասխան Ապահովագրական գումարը:

9.4. Եթե Ապահովագրական պատահարը վրա է հասել Կանոնների 4.1.4. կետում նշված իրադարձության արդյունքում, ապա Ապահովագրական հատուցումը վճարվում է հափշտակված դրամական միջոցների չափով, բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված համապատասխան Ապահովագրական գումարը:

9.5. Ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով նախատեսված համապատասխան ապահովագրական գումարը չգերազանցող չափով:

9.6. Եթե Ապահովագրական պատահարը վրա է հասել Կանոնների 4.1.5 կետում նշված իրադարձության արդյունքում, ապա Ապահովագրական հատուցումը վճարվում է Օվերդրաֆտի գծով պարտավորության այն մայր գումարի չափով, որն առաջացել է Երրորդ անձանց կողմից չարտոնված Գործարքների իրականացնելու հետևանքով (ընդ որում, Ապահովագրական հատուցման մեջ ներառվում է Ապահովագրական դեպոզիտի գումարը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով), բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված համապատասխան Ապահովագրական գումարն է:

9.7. Եթե Ապահովագրական պատահարը վրա է հասել Կանոնների 4.1.6 կետում նշված իրադարձության արդյունքում, ապա Ապահովագրական հատուցումը վճարվում է վարկի գծով պարտավորության այն մայր գումարի չափով, որն առաջացել է Երրորդ անձանց կողմից չարտոնված Գործարքների իրականացնելու հետևանքով (ընդ որում, Ապահովագրական հատուցման մեջ ներառվում են Ապահովագրական դեպոզիտի գումարը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով), բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված համապատասխան Ապահովագրական գումարը:

9.8. Կանոնների համաձայն, Ապահովագրողը համապատասխան Ապահովագրական գումարի և հատուկ Ապահովագրական գումարի (եթե այդպիսին սահմանված է Պայմանագրում) սահմաններում Ապահովադիրին (Ապահովագրված անձին) հատուցում է դատարանում գործերի վարման ծախսերն այն հայցերով, որոնք ներկայացվել են Կանոններում նշված իրադարձությունների արդյունքում Հաշիվներից միջոցների դուրս գրման կապակցությամբ: Նշված ծախսերը հատուցվում են միայն, եթե.

9.8.1. Բանկ-թողարկողը հրաժարվել է բավարարել Ապահովադիրի (Ապահովագրված անձի) ներկայացրած պահանջները նախադատական կարգով,

9.8.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) դատարանում կատարել է Ապահովագրողի բոլոր ցուցումները, եթե այդպիսիք տրվել են Ապահովագրողի կան նրա օրինական ներկայացուցչի կողմից:

9.9. Հնարավոր վնասը նվազեցնելուն ուղղված խելամիտ և հասանելի միջոցներ ձեռնարկելու Ապահովադիրի (Ապահովագրված անձի) պարտավորության հետ կապված ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ այլ վնասների հատուցման գումարին ավելանալով դրանք կարող են գերազանցել Ապահովագրական գումարը: Այդ ծախսերը հատուցվում են, եթե դրանք եղել են անհրաժեշտ կամ իրականացվել են Ապահովագրողի ցուցումները կատարելու համար, նույնիսկ եթե այդ միջոցները ապարդյուն են եղել:

9.10. Վճարման ենթակա Ապահովագրական հատուցման գումարից հանվում են՝

9.10.1. Ապահովագրական պատահարը վրա հասնելու օրվա դրությամբ վճարման ենթակա, սակայն չվճարված (Ժամկետանց) Ապահովագրավճարները և Պայմանագրով սահմանված ֆրանշիզաները,

9.10.2. Դրամական միջոցները, որոնք դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով Բանկ- թողարկողի կողմից ենթակա են վճարման Ապահովադիրին կամ Քարտապանին:

9.11. Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվեհամարից դրամական միջոցների դուրս գրման օրը:

9.12. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) իր վնասների հատուցում է ստացել մեղավոր/այլ անձանցից, ապա Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրի պայմանների համաձայն վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է նման գումարներ ստանալու մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:

9.13. Հատուցում ստացած Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված գումարները (կամ դրանց համապատասխան մասը), եթե Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ հայցային վաղեմության համար սահմանված ժամկետներում կբացահայտվի հանգամանք, որն օրենքով կամ Կանոններով մասամբ կամ ամբողջովին զրկում է նրան Ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

9.14. Եթե մինչև Ապահովագրական պատահարի վրա հասնելը Ապահովադիրը (Ապահովագրված անձը) Կանոնների 4.1. կետում նշված Ապահովագրական պատահարների գծով Ապահովագրության պայմանագիր է կնքել այլ ապահովագրական ընկերության հետ, ապա Ապահովագրողը Ապահովագրական հատուցում է վճարում իր հետ կնքված Պայմանագրի Ապահովագրական գումարի և Ապահովադիր (Ապահովագրված անձի) կնքած բոլոր ապահովագրության պայմանագրերի ընդհանուր ապահովագրական գումարների հարաբերակցության չափով: Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին բոլոր նման ապահովագրության պայմանագրերի մասին, նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրական ռիսկերը և ապահովագրական գումարները:

9.15. Ապահովագրողն ազատվում է այն վնասների հատուցման պարտավորությունից, որոնք առաջացել են այն պատճառով, որ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) դիտավորյալ խելամիտ և հասանելի միջոցներ չի ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու ուղղությամբ:

9.16. Ապահովադիր (Ապահովագրված անձի) կողմից Կանոնների 10.2.7 ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելը Ապահովագրողին իրավունք է վերապահում մերժել Ապահովագրական հատուցման վճարումը, եթե չապացուցվի, որ Ապահովադիրը ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարը վրա հասնելու մասին, կամ որ Ապահովագրողի տեղեկացված չլինելը չէր կարող որևէ կերպ ազդել Ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտավորության վրա:

9.17. Վնասի պատճառների և չափի վերաբերյալ Ապահովագրողի եզրակացության հետ Ապահովադիր (Ապահովագրված անձի) համաձայն չլինելու դեպքում, վերջինս իրավունք ունի պահանջել անցկացնել անկախ փորձաքննություն իր հաշվին:

9.18. Եթե Ապահովագրողն Ապահովագրական պատահարի գծով արդեն իսկ իրականացրել է Ապահովագրական հատուցման վճարումը Ապահովադիրին (Ապահովագրված անձին), սակայն Բանկ-թողարկողի կամ այլ անձանց կողմից համապատասխան վճարային համակարգում Ապահովագրական պատահարի հետ կապված ներկայացված պահանջի արդյունքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) այդ վնասի գծով ստացել է որևէ գումար, ապա Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ Ապահովագրողին վերադարձնել իր ստացած այն գումարները, որոնք նա նաև Ապահովագրողից է ստացել որպես Ապահովագրական հատուցում: Ապահովագրական հատուցման վերադարձման դեպքում Ապահովադիրը պարտավորվում է վերականգնել ապահովագրական գումարի մեծությունը:

9.19. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոնների 8.3 կետում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված հնգօրյա ժամկետում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել

ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում): Եթե Ապահովագրի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն տեղի ունեցած պատահարի պատճառները կամ վնասի չափը հիմնավորելու համար, ապա սույն կետի առաջին մասում նշված ժամկետները սկսում են հոսել վնասի պատճառների և(կամ) չափի հիմնավորման վերաբերյալ փաստաթղթերն Ապահովագրողի կողմից ձեռք բերման հաջորդ օրվանից: Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովագրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովագրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովագրին (Շահառուին): Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով: Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովագիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

9.20. Ապահովագրողն իրավունք ունի երկարացնել Ապահովագրական հատուցման վճարման որոշման ընդունման վերաբերյալ ժամկետը, եթե.

9.20.1. Ապահովագրի (Ապահովագրված անձի) նախաձեռնությամբ և նրա հաշվին, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, նշանակվել է լրացուցիչ փորձաքննություն կամ ներքին հետաքննություն՝ վնասի չափը, դրա պատճառները պարզելու նպատակով,

9.20.2. Ապահովագրական պատահարի փաստով հարուցվել է քրեական գործ:

9.21. Ապահովագրական հատուցման վճարումը հետաձգելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է գրավոր ծանուցում ուղարկել Ապահովագրին (Ապահովագրված անձին), նման որոշում կայացնելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

9.22. Եթե Կանոններով սահմանված ապահովագրական ռիսկի առնչությամբ իրավասու պետական մարմինների կողմից հարուցված է քրեական գործ, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարելու կամ այն մերժելու մասին Կանոններով և այլ իրավական ակտերով նախատեսված եզրակացությունն Ապահովագրին (Շահառուին) իրավունք ունի տրամադրել միայն քրեական գործի ավարտի կամ կասեցման վերաբերյալ Ապահովագրից (Շահառուից) համապատասխան փաստաթղթերն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում:

9.23. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը: Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու այլ անձանց:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. Ապահովագրին իրավունք ունի՝

10.1.1. Ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հաստատող փաստաթղթերը,

10.1.2. ծանոթանալ Ապահովագրության պայմաններին,

10.1.3. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով,

10.1.4. ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով ստանալ ապահովագրական հատուցում,

10.1.5. Պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը, որից հետո կորցված պայմանագրի օրինակը ճանաչվում է անվավեր: Պայմանագրի գործողության ընթացքում, Պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրից գանձել պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար:

10.2. Ապահովադիրը պարտավոր է՝

10.2.1. Պայմանագրում նշված ժամկետներում վճարել ապահովագրավճարները,

10.2.2. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին՝ ապահովագրության դիմում-հարցաթերթիկում նշելով ռիսկերը, ապահովագրական գումարները, ապահովագրության պայմանագրերի համարները և դրանց գործողության ժամկետները,

10.2.3. Ռիսկի վերագնահատման համար նշանակություն ունեցող նոր հանգամանքների առաջ գալու դեպքում՝ դրանց մասին անմիջապես հայտնել Ապահովագրողին,

10.2.4. Պահպանել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված, Ապահովագրության օբյեկտին առնչվող համապատասխան անվտանգության նորմերը և կանոնները,

10.2.5. Ապահովագրական պատահարների առաջացման դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով,

10.2.6. Հաղորդել Ապահովագրողին ապահովագրական պատահարի հետ կապված իրավասու մարմինների գործողությունների մասին (հետաքննություն, նախաքննություն, դատական ծանուցագրեր և այլն),

10.2.7. Անհապաղ, բայց ոչ ուշ, քան Ապահովագրական պատահարը ի հայտ գալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողի ներկայացուցիչներին Պայմանագրում նշված հեռախոսահամարներով, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին: Քարտապանի Ապահովագրված քարտի կորստի կամ գողության դեպքում՝ անհապաղ, բայց ոչ ուշ, 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկ-թողարկողին՝ ներկայացնելով քարտային գործարքի բողոքարկման դիմում:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

10.3.1. Ապահովադիրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,

10.3.2. Վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,

10.3.3. Ուսումնասիրել Ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

10.3.4. Միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը Ապահովադրի կողմից՝ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում,

10.3.5. Պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու Կանոններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր

10.3.6. Իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.4. Ապահովագրողը պարտավոր է՝

10.4.1. Ապահովադրին ծանոթացնել Ապահովագրության պայմաններին, Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

10.4.2. Ապահովադրի պահանջով և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե նրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10.4.3. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել նրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,

10.4.4. Չհրապարակել Ապահովադրի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները:

10.5. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

11.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից վճարված գումարի սահմաններում:

11.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

11.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Ապահովագրված անձի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

12.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

12.2. Այն դեպքում, երբ 12.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

12.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 13. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

13.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

13.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ

թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ծայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

13.3. Կետ 13.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

13.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

13.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 13"1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

14.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի, Ապահովագրված անձի, Շահառուի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:

14.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: